

Դեկտեմբերի վերջերը, «Քայիտա»-ի ղեկավար Ուսամա Պըն Լատեն ողջ էր, ինչ որ կը նշանակէ, թէ ան փրկուած է ԱՖղանիստանի եւ յատկապէս Թարա Պորայի վրայ ամերիկեան սաստիկ յարձակումներէն, կը գրէ «Թայմ» շաբաթաթերթը այսօրուան իր թիւին մէջ:

Իբրեւ փաստ, շաբաթաթերթը կը նշէ այն նամակը, որ գրուած է Պըն Լատենի ձեռամբ, ուղղուած՝ «Քայիտա»-ի պատասխանատուներէն Ապու Չուպայտայի, որ ներկայիս Միացեալ Նահանգներու մէջ հսկողութեան տակ է:

(ՌՈՅԹԸՐԳ)

ԱՅՍՕՐ՝ ՇԻՐԱՔ - ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ ԷԼԻԶԷԻ ՊԱԼԱՏԻՆ ՄԷՁ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի այսօր կէսօրին Փարիզի Էլիզէի պալատին մէջ պիտի տեսակցի Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի հետ իր դռնփակ ժողովին ընթացքին, որմէ ետք քննարկումները կը շարունակուին Ֆրանսայի վարչապետ Ժան - Փիեռ Ռաֆարէնի եւ արտաքին գործոց նախարար Տոմինիք Տը Վիլիէնի մասնակցութեամբ:

Կէսօրէ ետք, Հարիրի Մաթինիոնի պալատին մէջ ֆրանսացի իր պաշտօնակիցին հետ պիտի քննարկէ Միջին Արեւելքի վիճակն ու երկկողմանի յարաբերութիւնները: Շատ հաւանաբար առաջին հերթին քննարկուին տնտեսական հարցեր, որոնց շարքին՝ Փարիզ 2 համաձայնագիրին առնչուող խնդիրներ:

Վարչապետ Հարիրի Փարիզէն պիտի մեկնի Զատ եւ վաղը կը վերադառնայ Պէյրութ:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ ՄՈՆԱՔՈՅԷՆ

Հանրապետութեան նախագահ Գոր. Էմիլ Լահուտ երէկ գիշեր վերադարձաւ Լիբանան: Նախագահ Լահուտ Չեխիա իր պաշտօնական այցելութիւնը եզրափակելէ ետք, փոխ վարչապետ Իսամ Ֆարէսի հետ երկօրեայ արձակուրդի մը համար ուղղուեցաւ դէպի Մոնթէ-Քարլո:

Ազգային Լրատու Գործակալութիւնը Շաբաթ օր հաղորդեց, թէ կը սպասուի, որ նախագահ Լահուտ իր վերադարձէն ետք աշխատի նախարարաց խորհուրդի Հինգշաբթի օրուան նիստէն առաջ դարձանել Ուզալիի դէպքին ու անոր յաջորդած քաղաքական կեցուածքներուն ստեղծած լարուած մթնոլորտը:

ՍՈՒՐԻԱՅԻՔ ԶՄԻՋԱՄՏԵՑԻՆ ՌԻԶԱՅԻԻ ՀԱՐՑԻՆ

ԿԸՍԷ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԻՏԻ

Տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի երէկ ձայնասփռուած հարցազրոյցի մը մէջ հաւաստեց, որ սուրիացիք ոչ մէկ ձեռով միջամտած են վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ Հըզպալլայի միջեւ Ուզալիի կամուրջի հարցի հանդարտեցումին համար:

Սուրիացիներուն համար ողջունելի է Լիբանանի կայունութիւնը ամրապնդող, լիբանանցիներու միակամութիւնը պահպանող եւ շրջանային այս վտանգաւոր հանգրուանին լիբանանեան միացեալ կեցուածքը պահպանող ամէն ճիգ, ըստ ան եւ Երուսաղէմ: «Բայց անոնք չմիջամտեցին եւ ճիշդ չէ ամէն հարցի մէջ ենթադրել, որ անոնք կը միջամտեն, որովհետեւ ասիկա հարցականներ կը ստեղծէ»:

ԱՐԱՖԱԹ ՊԱՏՐԱՍՏ Է ՏԵՍԱԿՅԵԼՈՒ ՊՈՒՇԻ ՀԵՏ

ԲԵԹՂԵՐԵՄԻ ՄԷՁ ԸԱՍՏԱՏՈՒԱԾ ԿՐԱԿՄԱՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԶՆՋՈՒՅՑԱԻ

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պենիամին Պէն էլիզաբէր ընդհանրապէս կեցեցման վայրերու հրեաներէն պահանջեց վերցնել տասը ապօրինի կեդրոններ, զորս հաստատած են Այսրյորդանանի մէջ: Բնակեցման վայրերու ղեկավարներ հակադարձեցին քննադատելով Պէն էլիզաբէրը եւ զայն ամբաստանելով պաղեստինեան ըմբոստութիւնը վարձատրելու յանցանքով:

Մինչ Պէն էլիզաբէր թիրախ կը դարձնէր ապօրինի կեդրոն վառուցումը բնակեցման վայրերը, բնակը մեղմացուց Այսրյորդանանի շրջափակումը՝ վերցնելով Բեթղէհէմի մէջ հաստատուած կրակամարի դրութիւնը: Այլ քաղաքներու մէջ, սակայն, կրակամարը հաստատ մնաց՝ բանտարկուած պահելով հարիւր հազարաւոր պաղեստինցիներ:

Մեկնաբաններ դիտել տուին, որ Պէն էլիզաբէր արշաւի ձեռնարկած է հրեական ապօրինի կեդրոններուն դէմ, մեղմացրելու համար այսրյորդանանեան եօթը քաղաքներ:

Րոն վերստին գրաւման պատճառով հակազդեցութիւնը պաղեստինցիներուն մօտ: Իսրայէլեան բանակը երկու շաբաթէ ի վեր վերադարձած է եօթը քաղաքներ, իրրեւ հակադարձութիւն պաղեստինեան անձնասպանական գործողութիւններուն դէմ: Մեկնաբաններուն համաձայն, Պէն էլիզաբէր կ'ուզէ մեղմացնել միջուկային Աշխատաւորական կուսակցութեան այսօրուան ժողովէն առաջ: Աշխատաւորականները կը մերժեն պաղեստինեան շրջաններուն վերադարձումը եւ գինուորական գործողութիւնները: Պէն էլիզաբէր ըսաւ, որ մինչեւ երկուշաբթի օր (այսօր) քանդուած պիտի ըլլան քսան կեդրոններ: Ան աւելցուց, որ քայլերը պիտի շարունակուին ապօրինի կեդրոն հաստատուած բոլոր վայրերը քանդելու համար: Պէն էլիզաբէր ըսաւ նաեւ, որ ընտրած է բնակեցման այն կեդրոնները, ուր մեծ թիւով բնակիչներ չեն հաստատուած եւ որոնք դիւրին թիրախներ են պաղեստինեան յարձակումներուն:

Հրեական բնակեցման վայրերու ԵՇԱ խորհուրդը դատապարտեց Պէն էլիզաբէրի որոշումը, դիտել տալով, որ ան կը քաջալերէ ու կը վարձատրէ ահաբեկչութիւնը: Պաշտպանութեան փոխ նախարար

Բնակեցման վայրերու հաստատման, կ'ըսեն, որ ապօրինի կեդրոն վառուցումը աւելի քան վաթսուէն կեդրոններ կան Այսրյորդանանի մէջ, յատկապէս՝ բլուրպանութեան փոխ նախարար

Հիւանդատար ինքնաշարժներ, որոնց մէջ կային 27 պաղեստինցիներ, զորս հարցաքննութեան կ'ենթարկեն: Բանակին համաձայն, անոնց կարգին են ծայրայեղականներ ու զինեալներ: Պաղեստինեան իշխանութեան առողջապահուած թեան փոխ նախարար Մուսթաֆա Շարիֆ ըսաւ, որ ինքնաշարժները բեթղէններ եւ հիւանդատարներ կը փոխադրէին:

Իսրայէլեան ուժերը Շաբաթ օր ռմրահարցեցին Հեպրոնի պաղեստինեան ապահովութեան ուժերուն կեդրոնը, որ ամբողջի մը չափ տոկոսն էր ու պաշտպանուած: Բանակը կը պնդէր, որ հոն ապաստանած էին 15 ծայրայեղականներ, որոնք մերժած են անձնատուր ըլլալ: Քանդուած կեդրոնին մէջ զիականներ չգտնուեցան: Կարգ մը արքիւրներու համաձայն, զինեալները փախուստ տուած են ընդլայն տակեայ փապուղիներու միջոցով: Պաղեստինեան իշխանութիւնը դատապարտեց իսրայէլեան բանակին արարքը:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԻՍՐԱՅԷԼ ՍՊԱՆՆԵՅ ՀԱՄԱՍԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԸ

Իսրայէլեան յատուկ քոմանտո մը երէկ գիշեր ահաբեկեց Համասի բարձրաստիճանի պատասխանատուներէն եւ պինուորական «ուղեղ»ներէն՝ Մուհամատ Ալ Թահերը, որուն անունը երկար ատենէ ի վեր կը գտնուէր իսրայէլեան գաղտնի սպասարկութեանց սեւ ցանկին վրայ, իբրեւ կապակերպութեան լաւագոյն ումը պատրաստողը:

Ըստ իսրայէլեան ռազմական լրատուի՝ ան Համասի Ալի Տիւն Հասսամ փաղանգին Նապուսի պատասխանատուն է եւ ծանօթ է «Թիւ 4 երկրաչափը» ծածկանունով:

(ՌՈՅԹԸՐԳ)

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՄՕՏ Է

Կ'ԸՍԷ ՆԻՔՈՒԱՅ ԿՐԻՊՔՈՎ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Ուրբաթ օր Էսթոնիոյ մայրաքաղաք Թալինի մէջ հանդիպում ունեցած էր ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահներուն հետ: Հանդիպումէն ետք, Մինսքի խմբակի ղեկավար Միքայիլ Կրիպտով յայտարարած է, թէ «Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման բանալին Հայաստանի եւ Արարկիստանի նախագահներու ձեռքին մէջ է»:

Ըստ ռուս դիւանագետին՝ տագնապի լուծման բանակցային գործընթացը դրական որոշ վարձացում արձանագրած է: «Գործընթացին մէջ ստեղծուած է սպասողական ժամանակաշրջան մը. եւ նախագահներ Քոչարեանի եւ Ալիեի յառաջիկայ հանդիպումը չափազանց կարեւոր պիտի ըլլայ»:

Մինսքի խմբակի երեք նախագահներն ալ վստահեցուցած են, թէ Հայաստանի եւ Արարկիստանի նախագահներու հետ իրենց հանդիպումները լուծման ուղղուած ջանքերու կողմնորոշման առիթ կ'ընձեռեն:

Մինսքի խմբակի նախագահները մերժած են մեկնաբանել

փարիզեան սկզբունքներու վերաբերեալ Հայտարարութիւնները, յայտարարութիւնները:

ՄՈՆԻՏՈՐ 2002

րար Տալիա Ռապիին Փելոստի յայտնեց, որ հրեայ բնակիչները համաձայնած են մինչեւ այս գիշեր քանդել առաջին տասը դիրքերը, մնացեալներն ալ աւելի ուշ: Փելոստի բնակիչները չենթարկուին, պաշտպանութեան նախարարը բռնի ուժով պարպել պիտի տայ կեդրոնները: Աւելի ուշ, ապահովութեան աղբիւրները հաղորդեցին, որ Հեպրոնի մօտ հաստատուած երկու կեդրոններու քանդումը սկսած է:

Նաղաղասէր իսրայէլացիներու շարժումներ, որոնք դէմ են հրեական

Միւս կողմէ, Ռամալայի մէջ, պաղեստինցի ծայրայեղականներ հանդիպումներ ուժեղ բնակարաններ խուզարկեցին Ամարի գաղթականային մէջ, ուր տասնեակ մը մարդիկ ձերբակալուեցին, սակայն գանդնք հարցաքննելէ ետք՝ ազատ արձակեցին, յայտնեցին ականատեսներ: Իսկ Նապուսի մօտ գտնուող Թամուն գիւղին մէջ ձերբակալուած են աւելի քան վաթսուէն պաղեստինցիներ: Իսրայէլեան զինուորական արքիւրները հաղորդեցին, որ Ռամալայի մէջ կանգնեցուցած են երկու

ԱՐԱՖԱԹ ՊԱՏՐԱՍՏ ԴՈՒՇԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՌԵՆԵՍԱՆՈՒ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ երէկ յայտարարեց, որ պատրաստ է «որեւէ ատեն, որեւէ տեղ» հանդիպում ունենալու Միացեալ Նահանգներու հետ:

Շարք՝ էջ 10

ՊՐԱԶԻԼ ՏՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԱՐԺԱՆԱՅԱԻ ՏԻՏՂՈՍԻՆ



17րդ Մոնտիալի աւարտական ճակատում երէկ վերջ գտաւ Պրագիլի փայլուն յաղթանակով՝ 2-0, Գերմանիոյ դէմ: Երկու կողմն ալ ճշմանակեց Ռոնալտո, որ հանդիսացաւ Մոնտիալի կողմնորոշողը՝ 8 կողով: Լատիստիկեան խումբը 5րդ անգամ ըլլալով արժանացաւ տիտղոսին: Մանրամասնութիւնները՝ մարզական էջով:

ՃԱՇԱՐԱՆ ՌԻԱՏԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(Ժուրտ էլ Պալուր, Պսալիմէն դէպի Պրումանայի ձամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԾԱՌԱՋԱՐԴ, ԸԱՆԴԱՐՏ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄՅՆՈՒՈՐՏ

- Միշտ առատ եւ քանակաւ աղանդեր, համարում ճաշեր նաեւ ըստ ապագանքի:
- Հայկական, արաբական եւ երոպական երաժշտութիւն:
- Ամէն Հինգշաբթի, Ուրբաթ, Շաբաթ երեկոները եւ Կիրակի կէսօրին, յատուկ յայտագիր հանրածանօթ երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուիի:
- Փոքրերու յատուկ խաղավայր:
- Կը ստանձնենք միութեանական եւ անձնական խորհրդակցութիւններ յարմար գիւղերով:

ԾԱՆՕԹ. Յատուկ ճաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օղի, գարեջուր եւ զովացուցիչ:

◆ Մէկ անձի համար միայն **17\$:**

Հեռաձայն. 04 - 808707 / 03 - 360667:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 80ԱՄԵԱԿ

Շարաթ, 29 Յունիսի երեկոյան ժամը 8:30ին, «Ռոյալ Փլազա» պանդոկին մէջ տեղի ունեցաւ Հայ Աւետարանական կեդրոնական Բարձրագոյն վարժարանի 80ամեակի նշման հանդիսութիւն, հովանաւորութեամբ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեանի եւ նախագահութեամբ վրէժ Սապունճեանի ամուսինները:

Նրա Սիւրբան, որ անդրադարձաւ օրուան խորհուրդին: Ապա վեր. Սողոմոն Բիրաղպեան կատարեց Ս. Գիրքի ընթերցում եւ օրհնութեան ու շնորհակալութեան խօսք արտասանեց: Անկէ ետք գեղարուեստական բաժինով հանդէս եկան Մաթիլտ Սանտրա Չոլաքեան, Պօղոս եւ Ռուզան Բանճարեան՝ նուագով, իսկ Մարի Զաքարեան արտասանեց «Ուրսուցման հիւնճարը»:



Վեր. Գարակէօզեան՝ խօսքի պահուց

Հանդիսութեան ներկայ էին երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, Լիրանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Հայ երեսփոխաններ, Հայ կաթողիկէ պատրիարքան ընդհանուր փոխանորդ Վարդան եպօ. Աչգարեան, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեան, Պոլսի Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարտիրոսեան եւ մեծ թիւով ուսուցիչներ, շրջանակաւորներ եւ հիւրեր:

Ապա տեսաերկից ջուր-ջուրով խօսեց Միջազգային Բանճարեան եւ Սոնիա Սիւրբան ներկայացուցին Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի անցած ութսուներեք տարիներու երկար ուղին: Ըստ ներկայացուած պատմականին՝ 16 Մայիս 1922ին գործել սկսած ներկայի կեդրոնական Բարձրագոյն վարժարանը իր առաջին քայլերը նետած է ապագայի հաւատքով, ներկայի նուիրումով եւ վճռակամութեամբ: Հակառակ բոլոր դժուարութեանց եւ արգելքներուն՝ սերունդներ դաստիարակելու եւ անոնց հայեցի կրթութիւն ջանքերու մար վարժարանը շարունակած է իր երթը եւ 1969ին փոխադրուած է նորակառուց էլէրեֆիէի շէնքերը: Ներկայացուած ծանօթագրութեան մէջ



Հրջանաւարտները անդրադարձան տարիներու ընթացքին դպրոցին մէջ կատարուած աշխատանքներուն, կրթական, բնկերային, մարզական, արուեստի եւ այլ բնագաւառներու մէջ: Ընդհանուր ձեւով լուսարձակի տակ առնուեցան նաեւ ուսուցիչներու, հոգաբարձուներու եւ տնօրէններու կատարած ծառայութիւնները, ինչպէս նաեւ՝ շրջանաւարտները եւ անոնց հասած դիրքերը:

Ապա խօսք առաւ վերապատուելի Փօլ Հայտոնիան, որ կող ուղղեց շրջանաւարտներուն՝ վերամիակրթութեան եւ համախմբուելու վարժարանին շուրջ, ուր տարիներ շարունակ ապրած ու հասակ նետած են: Ան նշեց, թէ շրջանաւարտները պէտք է աշխատին անոր գարգացման եւ բարգաւաճման համար՝ պարտականութեան եւ երախտագիտութեան գիտակցութեամբ:

Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր ձեռնարկը յաջողողներուն եւ վարժարանին որեւէ ձեւով օժանդակած անձերուն: Օրուան նախագահը վրէժ Սապունճեան իր արտասանած խօսքին մէջ անդրադարձաւ այն հաւատքին եւ հայեցի դաստիարակման, որոնք անհրաժեշտ են դպրոցներու պահպանման եւ հայութեան գոյատեւման մէջ: Ան այս առաքելութեան մէջ վեր առաւ կեդրոնական Բարձրագոյն վարժարանի դերը եւ անոր տուած հունձքերուն կատարած աշխատանքները: Ան շնորհակալութիւն յայտնեց դպրոցին ծառայած անհատներուն եւ բարեբեթ մարդկանց վարժարանին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՃԻՐՆԵՐՈՒ ՄՆԱՅՈՒՆ ԱՏԵԱՆԸ ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ ԱՃԽԱՏԱՆՔԻ

ԼԱ ՀԷՅ, 30 (ՌՈՅ-ԹԸՐԶ) - Պատերազմի ոճիւններու յատկացում աշխարհի առաջին մնայուն ատենար աշխատանքի պիտի սկսի Երկուշաբթի օր (այսօր), սակայն ընդդիմութիւն կը դիմագրաւ Ռուսիոյ, Չինաստանի եւ Միացեալ Նահանգներու կողմ: Այս վերջինները անձեռնմխելիութիւն կ'ուզեն արտասահմանի մէջ գործող իրենց խաղաղարար ուժերուն եւ ամերիկացի այլ պաշտօնատարներու համար:

Սակայն Մ. Նահանգներ կ'ուզեն իրենց խաղաղարար ուժերը միջազգային ատենանի հասողութեան սահմանէն դուրս պահել, սպառնալով Պոսնիոյ մէջ ՄԱԿի խմբակին առաքելութիւնը կասեցնել, եթէ իրենց պահանջածը չըլլայ:

Կանական ջոկատները, Պոսնիոյ 3 տարուան պատերազմէն ետք: Ուաշինկթըն սպասուած է վերջին քանակներն ղեմ, եթէ անոր խաղաղարար ուժերը եւ ամերիկացի պաշտօնատարներ անձեռնմխելիութիւն չստանան միջազգային ատենանէն:

Քինսադամներ կը յայտնեն, որ Ուաշինկթըն կը փորձէ ատենար անդամալուծել՝ անոր աշխատանքներուն սկսելէ առաջ իսկ, շեշտելով, որ անոր արշար ուղղուած է ինքնին ատենանի ղեմ, որուն ստեղծումը 69 երկիրներու կողմէ վաւերացուած է:

15 անդամ հաշուող ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը Երկուշաբթի առաւօտեան ժամերուն (այսօր) պէտք է որոշում կայացնէ Պոսնիոյ մէջ առաքելութեան գծով: ՄԱԿի խմբակը 1995ին հաստատուած էր, որ պէսպիսի մարզէ բազմա-համայնքային ոստի-

ԱԼՃԵՐԻՈՅ ՄԷՁ ՍՊԱՆԴԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Ալճերիոյ մէջ իսլամական ըմբոստ ուժեր թափ տուած են քաղաքացիներու դէմ յարձակումներուն: Ուրբաթէն Շաբաթ լուսոցող գիշերուան ընթացքին, զինեալներ 13 հոգի սպանեցին եւ ինը ուրիշներ վիրաւորեցին մայրաքաղաք Ալճէի մօտ, յայտնեցին հիւանդանոցային աղբիւրներ եւ յարձակումէն փրկուողներ:

Յիշեալ աղբիւրները աւելցուցին, որ զինեալներ յարձակում գործած են քաղաքայիններ փոխադրող օրոպիսի մը վրայ: Վիրաւոր մը ըսաւ, որ զինեալներ մօտաւորապէս տասը վայրկեան անըղհատ կրակած են իրենց դէմ: Ան աւելցուց, որ ութ զինեալներ էին գործողութիւնը կատարողները:

(ՌՈՅԹԸՐԶ)

MESROBIAN TECHNICAL COLLEGE
The Pioneer In Technical Education
Languages & Computer Courses
SUMMER SESSION
Make Up & Business Studies
(Spring Session)
Tuesday, 9th of July 2002
Arax street, Bourj Hammoud
Tel: (01) 260504 - Fax: (01) 262955
E-mail: mesrobca@dm.net.lb
Web Site: www.mesrobian.com
ՏԼՕՐԵՆՈՒԹԻՒՆ
ՍԵՄՐՈՂՊԵԱՆ ԱՐՇԵՍԻՅ
ՎԱՐՃԱՐԱՆԻ

A VENDRE
● DUPLEX A RABIEH (RUE 9), 270 M2, VUE PANORAMIQUE, 5 CHAMBRES A COUCHER + SALON + SALLE A MANGER. PRIX: 150.000 \$. TEL: 01/269924 - 01/261741 (9:00 AM - 4:00 PM).

Ets. Avo Soulahian
Exclusive Agent Ets.Avo Soulahian Tel: 01 - 691526
igloo 54 QUART Ultra
5 YEAR WARRANTY
Made in the USA

THE REVOLUTIONARY JAPANESE Air CONDITIONERS
DYNAMIC made in Japan
I like it Powerful Ideal Cool DYNAMIC
● 9000 - 24000 B.T.U. HEAT PUMP SPLIT SYSTEMS
● EXCEPTIONALLY QUIET OPERATION
● LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
● FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
● UNBEATABLE PRICES
GAS G. Ayanian & Sons
Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՆԱՄԱԿԱՆԻ

Պատուարժան խմբագրութիւն «Ազգակ» օրաթերթի:

Տարիներէ ի վեր Պուրն Համուտի քաղաքապետութիւնը, իր կողմէ ողջունելի նախաձեռնութեամբ մը, ամէն գիշեր Պուրն Համուտի քաղաքում մէջ յատուկ սարքերով միջատասպան նիւթ սրկելու աշխատանքը կը տանի:

Այս նիւթը իր մէջ բիոլոգիական տարրեր պարունակելով հանդերձ, կը բաղկանայ նաեւ մեծ քանակութեամբ մագնիս, ինչ որ սկսած է բաւական ներդրութիւն պատճառել մանաւանդ շնչառական եւ առողջական այլազան հարցերէ տագնապող քաղաքացիներուն:

Միւս կողմէ նաեւ, հակառակ անոր որ այս միջատասպան նիւթը իր որոշակի ազդեցութիւնը կ'ունենայ միջատներէն եւ, մանաւանդ, մեծերէն ձեռքազատելու աշխատանքին մէջ, այսուհանդերձ այս ազդեցութիւնը յաճախ մնալուն չ'ըլլար:

Այս հարցը պատկան կառոյցին ուշադրութեան կը յանձնենք: Վնասակար միջատներու դէմ պայքարը ընդհանրապէս շինիչ երեւոյթ է, եւ Պուրն Համուտի քաղաքապետութիւնը ալ վերջին տարիներուն ունեցած է իրապէս ողջունելի գործունեութիւն՝ ի դէմ ծառատնկումի այն մեծ աշխատանքին, որ կատարուեցաւ Պուրն Համուտի հիմնական փողոցներուն մէջ:

Ներկայիս երբ Պուրն Համուտի փողոցները ծառերով կը կանաչազարդուին (ինչ որ կարեւոր է մարտի օդ շնչելու իմաստով), պետք է անպայման ուշադրութիւն դարձուի նաեւ կենսոլորտային գետնի վրայ վնասակար նիւթերը ոչ վնասակար նիւթերով փոխարինելու հարցին:

Այս նկատողութիւնը չենք սահմանել միայն Պուրն Համուտի պարագային, այլ նաեւ՝ իրաւանցեան այլ շրջաններու համար:

ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏԻ ՄԸ

27 ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի մէջ ներկայիս կը գործեն 27 պետական կրթական բարձրագոյն հաստատութիւններ, ներառեալ՝ Հայ - ֆրանսական համալսարանն ու Հայաստանի Սլաւոնական համալսարանը: Սեփական համալսարաններին պետական հաւատարմագրերն ունի 15 հատը:

Ըստ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան բարձրագոյն կրթութեան վարչութեան պետ Ռուբէն Գասպարեանի, պետական բարձրագոյն կրթական հաստատութիւններ դիմողներուն թիւը 1995 -1999 թուականներուն ակնյայտօրէն նուազած է, սակայն անկէ ետք զգալիօրէն սկսած է աճ արձանագրել: Այսպէս, 2000 թուականին եղած է մօտ 14 հազար դիմող, 2001ին՝ 16 հազար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԿԱՅԱՆԻՆ ՄԷՋ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽԱԽՏՈՒՄ ՏԵՂԻ ԶԷ ՈՒՆԵՑԱԾ

Վերջին օրերուն Հայաստանի մէջ կատարուած են էլեկտրական հոսանքի անջատումներ: Հայաստանի ուժանիւթի նախարարութիւնը յայտնեց, որ այդ անջատումներուն պատճառը Հայաստանի կորիզային կայանի հաստատուն հոսանքի շղթաներուն մէջ տեղ գտած անսարքութիւնն էր, որուն ժամանակ անմիջապէս գործած է անվտանգութեան համակարգը եւ կորիզային կայանին տուեալ բաժինը անջատուած է ցանցէն:

Միջազգային չափանիւններով դէպքը վտանգաւոր չի նկատուիր, որովհետեւ անոր ընթացքին կորիզային անվտանգութեան որեւէ խախտում տեղի չէ ունեցած:

Advertisement for Galerie Vanlian Home Trends featuring wedding lists and home decor items.

ՕԹԱՆԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹԻՒՆԸ՝ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ

26 Յունիսին Երեւանի մէջ իր աշխատանքներուն սկսաւ ՕԹԱՆԻ, Երեւանի Մամուլ Ակումբի եւ Զինեալ ուժերուն կատարած ժողովրդավարական վերահսկողութեան ժրնեհի կեդրոնին կազմակերպած սեմինարը՝ «ՕԹԱՆԻ եւ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողութիւնը»:

Սեմինարին կը մասնակցէին ՕԹԱՆի կեդրոնատեղիի, Հայաստանի պետական կառոյցներու եւ լրատուամիջոցներու ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպութիւններու եւ ուսումնասիրական կեդրոններու պատասխանատուներ:

Երեւանի Մամուլ Ակումբի նախագահ Պորիս Նաւասարդեանի համաձայն, այս սեմինարը ՕԹԱՆի մասնակցութեամբ հայրենի լրագրողներուն համար կազմակերպուած առաջին սեմինարն է, որուն նշանակութիւնը կը բացատրուի մէկ կողմէ հասարակութեան եւ մամուլի՝ Հայաստանի գինեալ ուժերուն նկատմամբ համընդհանուր հետաքրքրութեամբ, միւս կողմէ, հասարակութեան եւ մամուլի՝ Հայաստանի Զինեալ ուժերու միջազգային ծրագրերուն անոնց

մասնակցութեան ոչ բաւարար պատկերացումով: Պորիս Նաւասարդեան յայտնեց, որ Զինեալ ուժերուն նկատմամբ ժողովրդավարական վերահսկողութիւնը շատ հարցերու լուծման կարելիութիւն կու տայ, ներառեալ հայ հասարակութիւնը յուզող այնպիսի հարցերու, ինչպէս՝ հայկական բանակին մէջ

գինեալ-գինեալ, գինեալ-ուր-սպայ յարաբերութիւնները, բանակի նիւթական-քեքնիք պատրաստականութեան մասին տեղեակ ըլլալ եւ այլն: Յայտնեց, որ յառաջիկային նմանօրինակ սեմինարներ պիտի կազմակերպուին նաեւ շրջանի միւս պետութիւններուն՝ Ազրպէյճանի եւ Վրաստանի մէջ:

ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ԲԱՆԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԽՕՍԻԼԸ ԿԱՆՈՒԽ Է

Ըստ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան միջազգային կապերու եւ գինեալ-ուր-սպայ յարաբերութեան համագործակցութեան վարչութեան պետ Գոր. Միշա Մելքոնեանի, տակաւին կանոնաւոր կ'աշխատանքը մէջ արհեստավար բանակ ունենալու մասին:

Մասնագետներու մօտաւոր հաշուարկներով, մօտ 45 հազար գինեալ ուժեր կ'ունենան արհեստավար զինեալ ուժեր ունենալու համար պիտի պահանջուի շուրջ 700 միլիոն տոլար:

Զօր. Միշա Մելքոնեան յայտնեց, որ այդ գումարը կը կազմէ Հայաստանի համախառն տարեկան արդիւնքին մօտ երեսուց առ հարիւրը եւ տար անգամով կը գերազանցէ պետական պիւտեճով պաշտպանութեան նախարարութեան տարեկան յատկացուող ֆինանսական միջոցները:

Մ. Մելքոնեանի համաձայն, նմանօրինակ հետազոտութիւններու համար, որովհետեւ անոր տարեկան պիւտեճը կը կազմէ մօտ 700 միլիոն տոլար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆԵՐ՝ ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ

2002 թուականին Երեւանի եւ արտասահմանեան քաղաքներու՝ Մոսկուայի, Լիոնի եւ Մինսքի միջեւ ստորագրուած են համագործակցութեան 4 համաձայնագրեր, որոնցմէ վերջինը կը վերաբերի Երեւանի քաղաքապետարանի եւ Պիելոուսիոյ մայրաքաղաքի քաղաքապետութեան միջեւ առեւտրական-տնտեսական, գիտական-քեքնիք եւ մշակութային համագործակցութեան:

Տակաւին նորհրդային Միութեան տարիներուն Երեւանը բարեկամութեան եւ եղբայրութեան համաձայնագրեր ենք ունէր 4 քաղաքներու՝ Քարաբաղի (Իտալիա), Թիթոկրատի (Եռուկոսլաւիա), Անթանարիուսի (Մատակասթր) եւ Քէմպրիճի (Միացեալ Նահանգներ) հետ: Ներկայիս վերոյիշեալ 4 քաղաքներուն վրայ աւելցած են Քիբեւը, Օտեսան, Թիֆլիսը, Դամասկոսը եւ Սան Փաուլոն:

Ատկը գատ, ներկայիս համագործակցութեան համաձայնագրեր ենք կնքուած են Երեւանի եւ արտասահմանեան 15 քաղաքներու միջեւ (Անթանարիուս, Մարսէյ, Աթէնք, Վոլոկրատ, Սփեթերսպուրկ, Մոնրէալ, Պարթիսլաւա, Օտեսա, Պէյրութ, Մինսք):

Երեւանի քաղաքապետարանը կը նախատեսէ համագործակցութեան պայմանագրեր ստորագրել նաեւ Աշխապատի, Գահրէի, Տաթնիկի (Զինաստան), Սարաթո-

վի, Կրասնոտարի, Պուլքովի, Ալմաթիի, Թեհրանի եւ Սան Փաուլոյի հետ: Նշեց նաեւ, որ Երեւանը Ֆրանսաիսօս Քաղաքներու Միջազգային Ընկերակցութեան լիիրաւ անդամ է, ինչպէս նաեւ անդամ է Սեւծովեան Մայրաքաղաքներու Ընկերակցութեան:

Համագործակցութեան վերջին պայմանագիրը Երեւանի եւ Լիոն քաղաքին միջեւ ստորագրուած է անցեալ ամսուան ընթացքին:

ՍԵՒԱՆԱՅ ԼԻԾԻ ԶՈՒՐԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ՝ ՈՒՈԳՄԱՆ ԵՒ ՊԱՏԱԿՈՎ

Սեւանի դիտարանէն փոխանցուած տուեալներուն համաձայն, 18 Յունիսին սկսեալ Սեւանայ լիճէն ոռոգման նպատակով սկսած է ջրերի օգտագործումը:

Մինչեւ օրս այս նպատակով Սեւանայ լիճէն առնուած է 3 միլիոն խորանարդ մեթր ջուր: Այս քանակութիւնը երկու անգամով նուազ է ջրերի այն քանակութեան, որ օրական լիճ հոսի գետերու եւ Արփա-Սեւան փապուղիին միջոցով:

ՔԱՀԼԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍ



Մասնաւոր դասարաններու աշակերտներ՝ պարի ժամանակ

Հինգշաբթի, 20 Յունիսի երեկոյեան ժամը 17:00ին, ՔԱՀԼԻ հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ ՔԱՀԼԻ մասնաւոր դասարաններու ամառային հանդէս:

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներով, որոնք մեկնարանեցան ՔԱՀԼԻ մասնաւոր դասարաններու երգչախումբին կողմէ:

Մասնաւոր դասարաններու պատասխանատու Ռիթա Բարմաքաղաքեան ներկայաներու բարի գալուստ մաղթելէ ետք ամփոփ ձեւով ներկայացուց ՔԱՀԼԻ պատմական, տարիներու ընթացքին այդ կառոյցին մէջ տարուած հետեւողական ժրջան աշխատանքը՝ ի խնդիր սովորականէն դանդաղ ու դժուար սորվող պատանիներու ուսուցման: Ան նաեւ անդրադարձաւ ՔԱՀԼԻ մէջ առկայ համակարգիչի եւ ձեռագործի յատուկ դասընթացներուն:

Իր խօսքին աւարտին Ռ. Բարմաքաղաքեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք կ'օժանդակեն ՔԱՀԼԻ աշխատանքին դիւրացման եւ հեղասահ ընթացքին, ինչպէս նաեւ՝ հանդիսի յաջողութեան: Ապա գործադրուեցաւ դեղարուեստական յայտագիր, որուն իրենց մասնակցութիւնը բերին բոլոր դասարաններուն աշակերտները: Ներկայացուեցան երգեր, պարեր, արտասանութիւններ եւ «Մեր հայրը եւ որդին», «Անրան Հուրին» թատերախաղերը:

Աւարտական դասարանէն Ալին Դաւիթեան շրջանաւարտներուն անունով ուղղած կարգաց, որմէ ետք ՔԱՀԼԻ տնօրէն Գէորգ Գարապոյանեան եւ Ռիթա Բարմաքաղաքեան վկայականներ յանձնեցին Ալին Գարբիշեանի, Ալին Դաւիթեանի, Անի Քէլէշեանի, Սեւակ Նտրըլարեանի եւ Գէորգ Քէօյշեանի:

Փակման խօսքը արտասանեց տնօրէն Գէորգ Գարապոյանեան, որ ըսաւ, թէ տարիներու ընթացքին կեդրոնին տուած շնորհակալութեան եւ արդիւնքներուն ետին կան երեք տուեալներ, որոնք հիմնական տեղ կը զբաւեն այս յաջողութեան մէջ: Ան ըսաւ, թէ ասոնց առաջինը ծնողներն են, որոնք հակառակ տնտեսական դժուարութիւններուն՝ իրենց զաւակները կ'ուղղարկեն մասնաւոր դասերու, երկրորդ՝ ուսուցիչները, որոնք ոչինչ կը խնայեն աշակերտներուն կրթութեան եւ դաստիարակութեան համար, իսկ երրորդ դպրոց յաճախող աշակերտները, որոնք իրենց գործերով պիտի ճշդեն իրենց ապագան:

Հանդիսութեան յաջորդեց հիւրասիրութիւն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՐՂԱՆԵԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐԱԳԻՐԲ

Հայրենի «Արեգ» հրատարակչութիւնը լոյս ընծայած է հայրենի նկարիչ Վարուժան Վարդանեանի գեղանկարներու պատկերազրկը, որ կ'ամփոփէ հեղինակին վերջին տարիներու ստեղծագործական նուաճումները:

Պատկերազրկը մէջ ներկայացուած են նաեւ նկարիչին մտորումները իր ստեղծագործական ուղիին, արուեստի կոչման եւ այլ հարցերու մասին:

ԿՈՄԻՏԱՍԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ՝ ԱՆԳԼԵՐԵՆ

Ամերիկեան «Դրապարկ Փրես» հրատարակչութիւնը անդրէրէնով հրատարակած է Կոմիտաս Վարդապետի երաժշտագիտական ժառանգութիւնը մէկ-տեղով մեծ ժողովածու մը («Կոմիտաս. Էսսէներ եւ յօդուածներ»):


Ժողովածուն կ'ընդգրկէ Կոմիտասի այն աշխատութիւնները, որոնք կը վերաբերին հայկական ժողովրդական երգերուն եւ խաղիկներուն: Ժողովածուն կը ներառէ նաեւ Կոմիտասի գրիչին պատկանող տեսական աշխատութիւններ եւ անոր մասին լոյս տեսած գրականութեան ցանկեր: Այնտեղ գետնեղած են Կոմիտասի գեղանկարչական լաւագոյն դիմանք կարներու վերահրատարակութիւնները:

Առանձին հետաքրքրութիւն կը ներկայացնէ մանաւանդ ժողովածուին մէջ լոյս տեսած Կոմիտասի նամակները: Հրատարակչութեան հովանաւորն է Նուպար Ուզունեան:

Advertisement for HAMPIG SASSOUNIAN CSP - L.A.C. B - 5 - 131 44750 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 - USA

Advertisement for ZAVRANAYAN TRAVEL SERVICES listing travel packages to various destinations like 1. ԱՐԵՄՏԱԿՈՅԱՍԱՆ, 2. ՈՒՐՏԱ - ԶԵՅՈՒՆ - ՏԻՂԱՆԱԿԵՐՏ.

Անակոսքային ԶԵ



ԱՆՃԱՆՕԹ ԵՒ ԱՐԴԷՆ ԾԱՆՕԹ ԻՄ ՔԱԹԱԼԱՆ ԸՆԿԵՐՍ

Պարսելոնա, Սեպտեմբեր 2001: Իրրեւ լիբանանեան ցուցարար կը մասնակցինք «Նուրաբար 2001» միջազգային ցուցահանդէսին: Բացման երրորդ օրը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 11ի նշանաւոր դէպքը եւ զարմանալիօրէն, անմիջապէս ամբողջ զղեակը (ցուցահանդէսը տեղի կ'ունենար միջինադարեան զղեակի մը մէջ) ամալացաւ: Պարզուեցաւ, որ դուրսը, Լա Ռամպլա փողոցին վրայ, մեծ ցոյցեր տեղի կ'ունենան:

Մտահոգ նստած եմ տաղաւարիս մէջ: Հասուն տարիքի մէկը «Նուր» Արք» ցուցարարի ցուցանակին նայելէ ետք կը մտնեմս:

- Անգլերէն, թէ ֆրանսերէն: - Անգլերէն:


- Լա՛ւ, ինձի ըսին, թէ դուք Լիբանանին կու գաք, սակայն հայ էք: - Ճիշդ է:

- Եւ մասնագիտութեամբ արուեստարան: - Այդ մէկը եւս ճիշդ է:

- Կրնա՞մ նստիլ... ժամանակ ունի՞ք: - Ի հարկէ, հրամայեցէք:

Կր սպասէի, որ անծանօթ-ծանօթը րոպէ, թէ՛ «ես ալ հայ եմ» եւ խօսի հայկական նկարի մը մասին, թերեւս Այվազովսկիի նորայայտ գործի մը մասին... սակայն գրոյցը ընթացաւ բոլորովին այլ ուղղութեամբ:

- Ես քաթալան եմ, եւ գիտեմ ձեր պատմութիւնը: Գիտեմ, որ դուք տառապած ազգ էք, ունիք ուրոյն եւ բարձր որակի մշակոյթ: Սակայն 1915ին թուրքերը ուզեցին ոչնչացնել ձեզ: Մեր պատմութիւնը նման է ձեր պատմութեան, մենք ալ ունինք մեր պատմութիւնը:



«Լա Սակրատա Ֆամիլիա»

չէ ծնած, սակայն իր կազմաւորման շրջանին ապրեցաւ ու ստեղծագործեց հոս՝ Քաթալոնիա, Պարսելոնայի մէջ: Այս բոլորով հանդերձ, մենք ճնշուած ժողովուրդ ենք: Դուք աւելի բախտաւոր էք, ի վերջոյ թէ՛ հարեւիք ունիք եւ թէ՛ ալ ամբողջ աշխարհը կը խօսի ձեր դատին ու ցեղասպանութեան մասին: Իսկ մենք...

Մէկ կողմէ սկսայ ինքզինքս բախտաւոր զգալ եւ միւս կողմէ ալ կարծէք, թէ յանցաւորի աթոռին նստած ըլլայի:

- Կը ցաւիմ, որ ես կամ մենք պէտք եղած տեղեկութիւնները չունինք քաթալան ժողովուրդին մասին, սակայն ի՞նչ կ'առաջարկէք: - Դուք պէտք է որ առաջարկէք: Օրինակի համար, գոյուլթիւն ունի սպանական եւ լիբանանեան մշակութային յարաբերութիւններու ընկերակցութիւն, ինչո՞ւ համար գոյուլթիւն չունենայ քաթալան-հայկական պատմամշակութային յարաբերութիւններու ընկերակցութիւն:

- Շատ լաւ կ'ըլլայ խոր շունչ մը քաշելի: Ես... - Միայն չհասկնաք. խօսքը սպանական մշակոյթին մասին չէ:

Յանկարծ ցուցարարները խուժեցին զղեակ, պարտադրեցին լոյսերը մարել եւ դուրս հրահրեցին ներկաները... րնագողարար ոտքի ելած էինք: Հարսպատի նման ջերմօրէն գրկեց զիս եւ աւելցուց.

- Շատ լաւ կ'ըլլայ խոր շունչ մը քաշելի: Ես... - Միայն չհասկնաք. խօսքը սպանական մշակոյթին մասին չէ:

Յանկարծ ցուցարարները խուժեցին զղեակ, պարտադրեցին լոյսերը մարել եւ դուրս հրահրեցին ներկաները... րնագողարար ոտքի ելած էինք: Հարսպատի նման ջերմօրէն գրկեց զիս եւ աւելցուց.

- Աշխարհը խառն է: Հոս ալ, սակայն դուք դեռ երեք օր ես հոս էք: Ես ան...

- Խնդիրը հոս է արդէն, դուք կը կարծէք, եւ ձեզի պէս շատերը կը կարծեն, որ քաթալան ժողովուրդը սպանացի է: Մենք սպանացի չենք, ունինք մեր սեփական լեզուն, որ ֆրանսերէնի աւելի մօտ է, սակայն մենք ֆրանսացի ալ չենք, մենք ուրոյն մշակոյթի աւեր ժողովուրդ ենք... մենք ազգ ենք... դուք այս մասին գիտէ՞ք:



«Լա Սակրատա Ֆամիլիա» (հատուած)

պայման կը վերադառնամ... արդէն գործ չ'ըլլար. կը խօսինք, մենք եւ դուք գիրար պէտք է որ լաւ հասկնանք, մենք իրարու նման ենք... ցտեսութիւն:

Թէեւ քաթալանցի չղեկարարաւաւ, սակայն պատճառ եղաւ, որ ես աւելի մօտիկէն հետաքրքրուեմ Քաթալոնիայի պատմութեամբ, աշխարհագրութեամբ եւ մասնաւոր մշակոյթով:

Եւ իսկապէս քաթալանները ուրոյն ժողովուրդ են, ունին հարուստ պատմութիւն ու մշակոյթ. հարկ է կապ պահել անոնց հետ ու փորձել իրականացնել անծանօթ - ծանօթ անոր առաջարկը:

Կոստան Զարեան հիացում եւ ակնածանք ունի սպանական մշակոյթին հանդէպ: Ստորեւ տրուածը, որ պատմա-մշակութային հակիրճ արժեւորում մըն է, միայն հատուած մըն է այն բազմաթիւ էջերէն, զորս ան նուիրած է Սպանիոյ եւ անոր մշակոյթին:

Ի՛նչ ցեղ եւ ի՛նչ պատմութիւն... Խոյ ու շառաչող մի աշխարհագրութիւն, խառնաշփոթ մի քարտէս՝ լեցուն տարբերներ որոտումներով եւ ժողովուրդների վիթխարի պայքարներով:

Յեղբոր լաւաները հոսում են անապատներից ներս, խուժում դաշտերը, մագլցում լեռները, ամրապնդում մերկ ժայռերի կատարին, տարածում գետերի շուրջ, նուաճում ծովափները: Հազիւ ամրապնդուած՝ ահաւասիկ որ Աֆրիկէն, Փոքր Ասիան, Արեւմուտքը, մերկ ձիերի վրայ նստած, տափակ քիթերով եւ երկայն մագերով բարբարոսների վոճմակներ են զրկում, իրենց կարգին լաւայի նման տարածում, նուաճում, ամրապնդում, մինչեւ որ հերթը գայ երկրագործի ուրիշ մասերից եկած արշաւողներին:

Իպերները բարձրանում են հարաւից հիւսիս, պստերի խորհրդաւոր երկու ցեղերը, որոնց լեզուն մինչեւ հիմա մնացել է առեղծուածային, գալիս են Փոքր Ասիայից կամ Կովկասից, կէտերը իջնում են հիւսիսից ու խառնում իպերների հետ: Փոխիկեցիները եւ Ասիայի յոյները ստեղծում են ֆատիւմը, Մալակա-գէնը եւ Պարսելոնան. հոսմէացիները նուաճում են Սելիլիան եւ պալ՝ ամբողջ թերակղզին, որին ենթարկում են լատինական ազդեցութեան:

Ու ահա հոսմէական աշխարհի մեծ անկումը, մինչ սվեները անցնում են Փիրենեան լեռները՝ լքելով Գերմանիան, սլաւոնական ալեւները, վանտալները եւ, շատ հաւանական է, թաթարները դիմում են նրանց օրինակին: Մեծի ջարդեր, Հրդեհներ, անխորտ եւ անմիտ կոտորածներ եւ թալան, անխնայութիւն եւ քառս:

Եւ նաեւ Աֆրիկէի մահտականները... Նախ մի քանի ձիւնաւոր խմբեր: Կողովուրդ եւ աւար: Ապա՝ ամբողջ մի բանակ, Ալեքսանդրի վալիի թարիկ անունով թիկնապահի ղեկավարութեան տակ, ափ ելած ձեպէլ էլ թարիկի մօտ, որ աւելի ուշ պիտի անուանեն Ճիպրալուտ:

Այդ լուծը տեւում է երեք դար: Մահմետական Սպանիան դառնում է աշխարհի մեծագոյն քաղաքակրթական կենտրոններից մէկը: Ապտէլ Ռահմանի՝ Հօզր եւ խելաթի մի թագաւոր, ստեղծում է հրաշայի մի տրուեստ, հիմնում են բարձրագոյն դպրոցներ, որ գարկ են տալիս գիտութեան եւ փիլիսոփայութեան: Անապատները ոռոգում են, երկիրը հարստանում է, ի՛նչ աւելին. բայց Սպանիայի ոգին, նախ ընկճուած գրեթէ անհետացած, կամայականաց արթնանում է, ձեւաւորում իր սրբերի եւ հերոսների միջոցով եւ վերջապէս, մեծացած, ալեկոծուած նա գրոհ է տալիս թշնամու դէմ եւ ճակատագրական պայքարներից ետքը, աստիճանաբար վերականգնում իր անկախութիւնը եւ պատրաստուում իր մեծ, պատմական դերին:

Այդ մեծի խառնուրդից, հսկայական այդ կրակների միջից առաջ է եկել պողպատի նման դարձրուած մի ցեղ, որ, կրկնելով հոսմէական մեծքը, աւելի ուշ կարողացել է նոր Աշխարհում ստեղծել քանի մօտ ազգեր, որոնք դեռ շարունակում են խօսել իրենց լեզուն, գտնուում են իր մշակութային ազդեցութեան տակ, եւ որոնք դերը ամերիկեան նոր քաղաքակրթութեան մէջ շատ աւելի մեծ պիտի լինի, քան կարծում են:

Սպանիայի պատմութիւնը կանգ չի առել, նա թեւակոխել է ուրիշ մի շրջան, որ դեռ գոյացման մէջ է: Նա որոշ չափով դադարել է ազգ լինելուց, եթէ բուրբ ընդունենք արդիական ինքնաբեր եւ սահմանափակ պետականութեան միտքով: Նա իրեն համարում է raza եւ իր դասական լեզուում naciones չի նշանակում ազգ, այլ՝ ընտրելալ ցեղ, որի դերը համաշխարհային է:

Սպանիայի ոգին տարածողական, հաւաքիչ ընդթ է առել:

Նրա ստեղծագործական թափը տարածուել է դէպի լայնութիւնը: Նա կազմել է բազմաթիւ ուրիշ կենտրոններ, առանց սակայն կորցնելու իր միութիւնը: «Բոնեօրիսթատոնների» կատարած աշխատանքը դեռ կանգ չի առել: Մեծաշունչ արկածախնդրութիւններն իրենց ետեւ սերմեր են թողել, որոնք անապատների, փամփանների եւ խիտ անտառների ծոցում շարունակում են ծաղիկել, զարգանալ, ստուերախիտ ճիւղեր նետել:

Քաթալոնիայի գեղեցիկ եւ հնչուն լեզուն ներկայ է ամէնուրեք:

Ինչպէս դարեր առաջ մայր երկրում, այնտեղ, մշակութային այդ հեռաւոր գաղութներում ցեղերը եւ աստուածները խոյ պայքար են մղում իրենց գերագոյն համարութիւնը գտնելու համար: Ազգի թէքների հոյակապ տիեզերագիտութիւնը եւ առեղծուածային կրօնազգացողութիւնը, տարօրինակ կերպով խառնելով Յիսուսականների վարդապետութեան, ճգնում են ստեղծել նոր հոգեբանական այն տիպարը, որ, շատ հաւանական է, վաղը պիտի խաղայ կարեւոր պատմական դեր ինչպէս անապատների ափերին:

Սպանական ոգին նորից դժուարին պայքարի մէջ է: Կենտրոնից հեռու, նա նորից կրկնում է իր պատմութիւնը: Նորից ցեղերի, լեզուների, կրօնների խառնուրդը, օտար ժողովուրդների աւերիչ արշաւանները, տեւական պայքարները, շերտաւորուող հասարակական մտայնութիւնների կազմութիւնները, անհանգիստ եւ վտանգալի ընկերային կեանքի մրրկիչ, քաղաքական անորոշութիւնը: Եւ սակայն

յաղթողը միշտ մնում է raza, կենտրոնածիզ ոգին, չափաւոր ստեղծագործ այն թափը, որ պարզ մտածման առջեւ հանդիսանում է անհասկանալի եւ խորհրդաւոր:

Պարզ մի բան. Սպանիան գերազանցապէս է: Եւրոպական ջղագրգիռ ժխորում նրա ձայնը գրեթէ չի լսոււմ. նա թլոււմ է կէս մրափած, մինչ իրականի մէջ ամէն տեղ է՝ կենդանի եւ ներուժ:

* * *

Ինչքան նշանակալից են թաթարաթաթուր եւ խորհրդաւոր այն փոխաբերութիւնները, որոնք ստեղծուում են երկրի եւ մեր մէջ: Նրանք ստանում են գրեթէ երաժշտական ընդթ, դաշնակութեան այն բախտաւոր ձեւը, որ ընդգրկում է մեր ամբողջ կենսութիւնը, իջնում մեր գիտակցութեան տակ ծփող աշխարհը, բոյներ կազմում, թռիչք առնում եւ լինելիութեան նոր վիճակներին խորախոր իմաստներ տալիս:

Ի՛նչք երկիրը: Ոչ թէ, ինչպէս իտալիայում, արեւստի եւ ճարտարագիտութեան հոյակապ գլուխ գործոցները, որոնք մեզ զնում են արդէն կատարուած ու իրագործուած հոգեբանական բարդ իրողութիւնների առջեւ, ոչ թէ ֆրանսական այն գեղեցիկ դաշտանկարները, որոնք գծաւորուած եւ զգեստաւորուած են շնորհիւ արդիային ճիզին, որ կարծես ուզում է մի ինչ-որ բան թաքցնել, այլ՝ հողի, լոյսի, բնական դոյների այն մեծից եւ արտայայտիչ մերկութիւնը, որոնց առջեւ մեր հողին ստիպուած է դիքք առնել եւ դրսեւորել իր թաթարուած առաքինութիւնները: Ի՛նչք երկիրը, ինչպէս Հայաստանում:

Ինչպէս Հայաստանում՝ տեսարանը աւելի երկինք է, քան երկիր: Հողը համակուած է, շաղուած է արեւով: Ամառնային կէսօրներին, երբ երկիրը առած է իր կատարեալ արտայայտութեան ձեւը, Սպանիայի լեռները եւ դաշտերը բոցանում են, հալուած արծաթներ շղարշների տակ կանգ առնում այնպիսի վճռականութիւնով, որ մարդու յոգնած գգապատանքները սկսում են հաւատարմութեան ձեւը, պարի չիջնի, եւ եթէ իջնի, Սպանիան պիտի գլորուի նրա հետ հորիզոններից այն կողմ: Որովհետեւ թրթռացող օդը, որ բարձրանում է, այնքան լեցուած է հողի պայծառ հիւթերով, որ թլոււմ է նրա անբաժանելի մասը:

Հրաշալի եւ խոստմեք դաշտանկար՝ անապատային, լեռն եւ խորունկ:

Հսկայական սրբազան մի սեղան, որի վրայ անուածութիւնը ինքն իրեն պատարագ է մատուցում: Ձուհարիում է հողերի նրբագոյն, լուսաւոր Խաչորուումնաւէտ հիւթերը՝ երկնքի թափանցիկ, շողշողուն, անտեսանելի հիւթերին: Հաստատում է իր ճակատագրական միութիւնը: Ազդողոււմ է իր անբաժանելիութիւնը եւ վերականգնում է իր անմահութիւնը:

Այստեղ անհունը գտուած, վերացական, բնազանցական գաղափար չի, այլ տեսանելի, երկնքի լուսաւորութեան հետ շաղախուած մի իրականութիւն, ճառագայթուն մի մթնոլորտ, որի մէջ մարդ քայլում է ընկալանքով, ամբողջ մարմնով ողողուած:

Ահա թէ ինչու սպանացին ուզում է մահը ճանաչել, նայել նրա աչքերի մէջ, ապրել նրա հետ, ընդունել նրան իրեն լինելութեան ճակատագրական մի մասը, իրրեւ կենսել միւս երեսը:

Սակայն երկրի այդ միութիւնը երբեք միակերպութիւն չի: Նայեցէք լեռների բարձր պարիսպներին, որ բաժանում են նրան Եւրոպայից, Միջերկրական ծովին, որ Քաթալոնիայի գեղածիձող եզերքներին դեռ շարունակում է շնչել յունական մթնոլորտը, ովկիանոսին, որի հրաւիրող կանչը գալիս է Ամերիկաներից, Արիկանտիից վայր իջնող ժայռերին, ուր ներկայ է հրավառ եւ վերմաթեմ Աֆրիկէն, հարաւային հողապատերին - Քաթալոն, Սիբերա Նեւտան, Ռոնտան, Քատիքսի շրջակայքը, Հուելիան, Պատախոսը, Էսթրամատուրը, Կրետոսը, ուր ծաղկում է փարթամ եւ շուրջ մի բուսականութիւն, ու անապատներին, լայնատարած սթեփներին, կծու եւ խելալիչ աղբեր մագիլների մէջ սեղմուած, լեռն եւ ամալի, ուր սահմանները անհետացած են, ուր միջնակութիւնը տառապում է քամիների հետ, ուր լոյսերը պառկում են երեսի վրայ երկարած, բազուկները տարածած, հողի տակ թրջուած մեռելին խօսող վշտերով վառ մօր նման, եւ պիտի տեսնէ՞ք՝ ինչքան այլազան է Սպանիան:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

«Ա.Զ.Գ.Ա.Կ»-ի
ՀԵՆՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
- Ա.Զ.Գ.Ա.Կ-ի հետ կապուելու համար հետամայնել
հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
«Ն. ԱՂԱՆԵԱՆ» ՊԱՍՆԱԾԻՒՂ
ԱՆԹԻԼԻԱՍ

ԱՆԴԱՍԱԿԱՆ
ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 3 Յուլիս 2002, երեկոյան ժամը 8:00ին, Աղբալեան ակումբի «Արեւ թոյմաստեան» սրահին մէջ:
ԾԱՆՕԹ. Մեծամասնութիւն չգոյանալու պարագային ժամը 8:30ին ներկայացուցիչները մեծամասնութիւն պիտի կկատուին:


- Փիքասոն սակայն...
- Այո՞, Փիքասոն ալ: Թէեւ ան հոս

ՄՈՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ

ՊՐԱԶԻԼ ՅԱՂԹԵՅ ԳԵՐՄԱՆԻՈՅ՝ 2-0 ԵՒ ՇԱՆԴԻՍԱՅԱՒ ԱՇԽԱՐԻ ԱՆՈՅԵԱՆ



Ճափոնի եւ Հարաւային Բորնէյի մէջ կայացած 2002ի Մոնտիալը երէկ աւարտեցաւ, երբ Եոթոհամայի մէջ (Ճափոն) տեղի ունեցաւ աւարտական սպասուած ճակատումը՝ Պրազիլի եւ Գերմանիոյ միջեւ, ներկայութեամբ՝ 69 հազար համակիրներու:

Սուաքին անգամ ըլլալով էր, որ երկու հսկաները իրարու դէմ յանդիման կու գային Մոնտիալի 72 տարւան պատմութեան մէջ:

Պրազիլ, որ չորս անգամ շահած էր Մոնտիալի բաժակը (մրցանիշ մը), կը փորձէր իր մրցանիշը բարելաւել, մինչ Երեք անգամ բաժակը բարձրացուցած Գերմանիա կը փորձէր հաւասարի այդ մրցանիշին: Սակայն Պրազիլ եղաւ իր նպատակին հասնողը եւ 2-0 արդիւնքով տարաւ վերջնական յաղթանակը:

Մրցումին երկու կուլերը նշանակած Ռոնալտո (67րդ եւ 79րդ) ու Կաֆուին իր նշանակած ութ կուլերով հան-



Պրազիլի խմբապետ Զաֆու կը համբուրէ բաժակը

դիսացաւ Մոնտիալին սքորըրը, այլեւ Մոնտիալի պատմութեան մէջ ան 12 կուլերով կը գրաւէ կոլսքորըրներու ընդհանուր դասաւորման երրորդ դիրքը, պրազիլցի Փելէի հետ: Մոնտիալի պատմութեան մէջ ամենէն աւելի կոլ նշանակող մարզիկն է Կերտ Մուրըրը (Արենտեան Գերմանիա), որ նշանա-

կած է 14 կոլ: Սակայն 1 Մոնտիալի ընթացքին կոլսքորըրներու մրցանիշը կը մնայ ֆրանսացի Ժիւսթ Ֆոնթենի՝ 13 կոլ:

նենայ մեր երկրին՝ Գերմանիոյ մէջ»:

Գերմանիոյ մարզիչ Ռուտի Վէյլըրը եւս տխուր էր, որ իր կապը ձախողեցաւ տիրանալ տիտղոսին, որովհետեւ այդ բաժակին տիրանալով, ան Մոնտիալի պատմութեան մէջ պիտի հանդիսանար երրորդ անգամ, որ թէ՛ իրեն մարզիչ եւ թէ՛ իրեն մարզիչ պիտի իրագործէր այդ մէկը: Նախապէս, միայն Մարիո Զակալօ եւ Ֆրանց Դեքընպաուրը յաջողած են այդ տուպլէն իրագործել:

Մինչ Վէյլըրը կը ձախողէր այդ մէկը իրագործել, անդին Պրազիլի խմբապետ Զաֆու կը դառնար առաջին մարզիկը, որ Մոնտիալի աւարտականի երրորդ մրցումին ներկայ կը գտնուէր:

Հակառակ իր կապմին կրած պարտութեան, Վէյլըրը մեծ գովասանքով արտայայտուեցաւ Պրազիլի խումբին մասին ըսելով, որ անիկա սքանչելի խումբ մըն է: Ան ըսաւ, որ եթէ իր մար-



Ռուտի Վէյլըրը կը փորձէ մխիթարել Օլիվըր Զանը

կայացնէ իր հրաժարականը, որովհետեւ անոր պայմանագրութեանը Պրազիլի ֆուտբոլի ֆետերասիոնին հետ աւարտեցաւ Պրազիլ - Գերմանիա աւարտական մրցումէն ետք:

Ան Պրազիլի հետ կատարեց 24 մրցում, որոնց ընթացքին արձանագրեց 18 յաղթանակ, մէկ հաւասարութիւն եւ կրէց հինգ պարտութիւն: Անիկա

չնորհակալութիւն յայտնեց ֆրանսացի բժիշկ Ժերար Սելյանի, որ յաջողեցաւ փրկել ֆուտբոլիստի իր ասպարէզը, յաջող վիրաբուժութեան ենթարկուելէ ետք անոր կողմէն:

2002ի Մոնտիալի կոլսքորըրը հանդիսացած Ռոնալտո, ըսաւ, թէ բաժակը բարձրացնելէ ետք մտնած է այլեւ 1998ի Մոնտիալին իր կա-

դար սուլիչին վստահած էր ՖԻՖԱ այս մեծ ճակատումը եւ ան լրիւ արդարացուց իր վրայ դրուած յոյսերը:

Եթէ նախորդ 63 մրցումներուն ընթացքին մարզիկներ, մարզիչներ, պատասխանատուներ եւ համակիրներ դաշտէն դժգոհ կը հեռանային՝ բողոքելով իրաւարարներուն անարդար սուլիչին դէմ, երկ 64րդ եւ վերջին մրցումին այդ մէկը չպատահեցաւ, որովհետեւ Քոլիմա առաջին իսկ վայրկեաններուն մրցումը առաւ իր հակակշիռին տակ:

Յրդ դիրքի մրցումին, որ տեղի ունեցաւ Շաբաթ օր, Թաէկուի մէջ (Հարաւային Բորնէյ), աւելի քան 63 հազար համակիրներու ներկայութեան, Թուրքիա 3-2 արդիւնքով պարտութեան մատնեց Հարաւային Բորնէյն:

Մրցումէն ետք Հարաւային Բորնէյի մարզիչ հոլանտացի Կուս Հիտինք ըսաւ, թէ իր պաշտպանողական գիծին թերացումին պատճառով էր, որ իր խումբը ստացաւ երեք կոլ եւ չկրցաւ գրաւել երրորդ դիրքը: Մրցումին առաջին կուլը նշանակեց Հաբալ Շիւքրի՝ 11րդ երկվայրկեանին: Ան այսպիսով իր անուր արձանագրեց Մոնտիալի պատմութեան մէջ, որովհետեւ նշանակեց ամենէն արագ կոլը: Նախապէս այդ մրցանիշը կը պատկանէր վապալա Մասէթի (Չեխոսլովակիա), որ 1962ի Մոնտիալին (Չիլիի մէջ) նշանակած էր ամենէն արագ կոլը 15րդ երկվայրկեանին (Մեքսիկայի դէմ): Իր համար նշանակեց Թուրքիոյ մնացեալ երկու կուլերը (13րդ եւ 32րդ), իսկ Լի Էուլ-Եոնկ (9րդ) եւ Սոնկ Սոնկ-Կուկ (90րդ)՝ Հարաւային Բորնէյի երկու կուլերը:

ԹԵՆԻՍ. ՌԻՄՊԸԼՏԸՆ

ՀՈՒԻԹ ԵՒ ՌԻՒԼԻԸՄԱ ԱՆՅԱՆ Դ. ՀԱՆԳՐՈՒԱՆ



Վիքոս Ռիլիըմս եւ...



...Լէյթըն Հուիթ, որոնք անցան Դ. հանգրուան

Ուիմպլըտընի Գ. հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան անցեալ Շաբաթ օր, տղոց թիւ 1 դասուած Լէյթըն Հուիթ (Աւստրալիա) եւ աղջկանց թիւ 1ը՝ Վիլյամ Ռիլիըմս (Մ. Ն.) յաղթանակներ արձանագրելով պարտութեան Դ. հանգրուանին իրենց տոմսերը, յաջորդաբար պարտութեան մատնելէ ետք Ժիլիըմս Նովըր (Աւստրալիա) եւ Մորիս Տրէյթը (Քանադա):

16րդ դասուած Նիթոյա Էսքիւտէն (Յորանսա) պարտութեան մատնած ռուս Միխայիլ Եուզնի այսօր կարեւոր մրցում մը ունի կատարելիք Հուիթի դէմ:

28րդ դասուած արժանիքներու Դուիթ Նալպանտեան այսօր կէսօրէ ետք ժամ 14:00էն սկսեալ Պէյ-Րուլիթի ժամով կը ճակատի աւստրալիացի Ռէյն Արթիւրի դէմ:

Ստորեւ՝ Շաբաթ օրուան կարգ մը կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները:

- ՏՂԱԶ**
- 1.- Լէյթըն Հուիթ (Աւստրալիա) - Ժիլիըմս Նով (Աւստրալիա) 6-2, 6-1 եւ 6-3
 - Միխայիլ Եուզնի (Ռուսիա) - 16.- Նիթոյա Էսքիւտէ (Յորանսա) 6-2, 1-6, 6-3 եւ 6-3
 - 4.- Թիմ Զեմման (Քրիտանիա) - Ռէյն Էսքիւտէ (Հարաւային Աֆրիկէ) 7-6, 3-6, 7-6 եւ 6-1
 - Ֆելիսիանո Լոփէզ (Արգենտինա) - 17.- Ռայմըր Ծիուրըր (Գերմանիա) 3-6, 7-6, 6-4 եւ 6-4

- ԱՉԳԱԿՆԵՐ**
- 1.- Վիքոս Ռիլիըմս (Մ. Ն.) - Մորիս Տրէյթ (Քանադա) 5-7, 6-2 եւ 6-1
 - 6.- Ճասթին Զեմման (Պելիքիա) - Միխայիլ Բազանով (Ջորժիանիա) 6-4 եւ 6-4
 - 16.- Լիզա Ռէյմըր (Մ. Ն.) - Քոնչիթա Մարթինէզ (Արգենտինա) 2-6, 6-3 եւ 6-2
 - 4.- Մոնիքա Սելէպ (Մ. Ն.) - 27.- Այ Սուկիամմա (Ճափոն) 4-6, 6-1 եւ 6-4



Ռոնալտո (Ճափոն) եւ Զիլպըրըճ՝ Մոնտիալի բաժակը համբուրելու պահուն

25 տարեկան Ռոնալտո, սակայն, յոյսով է, որ պիտի յաջողի գերազանցել Մուրըրը, նկատի ունենալով իր տարիքը: 1958ին, 1962ին, 1970ին եւ 1994ին Մոնտիալի բաժակը բարձրացուցած Պրազիլ իր արձանագրած այս յաղթանակէն ետք անգամ մը եւս եկաւ փաստելու, որ կը հանդիսանայ յոյսով ժամանակներու աշխարհի մեծագոյն խումբը:

Նախքան աւարտական այս ճակատումը, Գերմանիոյ բերդապահ էր խմբապետ 33 տարեկան Օլիվըր Զան Ֆիֆալին կողմէ ընտրուեցաւ 2002ի Մոնտիալին լաւագոյն բերդապահը:

Հակառակ այդ կարեւոր տիտղոսին տիրանալուն, 67րդ կուլերէն տիրուեցաւ անոր «աններելի» եւ մահացու սխալ մը, երբ չկրցաւ գալ Ռիլիըմսի հարուածը եւ գնդակը «նուիրեց» Ռոնալտոյի, որ օգտագործելով այդ ոսկի առիթը՝ ցնցեց անոր բերդը: Վստահաբար Զան երկար տարիներ պիտի չկարենայ մոռնալ իր սխալը, թէ ան իր կապմին կրած պարտութեանէն ետք ըսաւ. «Այդ անբախտ կուլէն ետք, մենք պետք չէ, որ գէշ յիշատակներով պարհինք, այլ պետք է պարհինք, այլ պետք է լաւատեսութեամբ անցնել 2006ի Մոնտիալին, որ տեղի պիտի ու-

ղիկները մրցումին առաջին կէս ժամը իրենց ներկայացած լաւ առիթները օգտագործէին, պատկերը կրնար տարբեր ըլլալ, սակայն դժբախտաբար այդպէս չպատահեցաւ եւ հետզհետէ Պրազիլ ձեռք առաւ մրցումին դէպք եւ նշանակեց երկու կոլ:

Գերմանիոյ ներկայացած լաւագոյն առիթը ստեղծեց Օլիվըր Նեօվիլ, երբ անոր պատե հարուածը գալուց Գերմանիոյ Պրազիլի բերդապահ Մարքոսի, ապա... բերդին սինին կողմէ (Բ. կիսախաղին):

Իր կարգին, Պրազիլ մէկ անգամ հարուածեց Զանի բերդին սինին, Քիլպըրըճի (Ա. կիսախաղին) միջոցով: Վստահաբար բոլորէն աւելի տխուր էր կախակալուած մարտիկ Միքայել Պալաք, որ իր նշանակած կոլով իր կապը հասցուցած էր աւարտական հանգրուան, սակայն առանց դաշտ կարենալ ներկայանալու կրած էր պարտութիւն մը, այդ ալ պատմական մրցումի մը ընթացքին:

Իր կապմին արձանագրած այս յարթանակէն ետք, այժմ կը մնայ հարցական, թէ մարզիչ Լուիս Ֆելիքի Սքոլարի ի՞նչ պիտի անարդարեւորեցնէ: Ըստ պրազիլական օրաթերթի մը, ան շատ հաւանաբար ներ-

2002Ի ՄՈՆՏԻԱԼԻ ԿՈԼՍՔՈՐԸՐՆԵՐԸ

2002ի Մոնտիալին աւարտով, այժմ կոլսքորըրներուն դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը (նշենք, թէ մէկ կոլ նշանակող մարզիկներուն անունները չեն յիշատակուած):

- 1.- Ռոնալտո (Պրազիլ) 8 կոլ
 - 2.- Ռիլիըմս (Պրազիլ) եւ Միքայել Քիուկ (Գերմանիա) 5ական կոլ
 - 3.- Եոն Զալ Թոմասըն (Պանիա) եւ Քրիսթիան Վիլի (Իտալիա) 4ական կոլ
 - 4.- Մարք Վիլմոթց (Պելիքիա), Միքայել Պալաք (Գերմանիա), Ռոպ Բին (Ալի), Փաուլիթա (Փորթուգալ), Փափէ Պուպա Տիֆ (Անգլիա), Հենրիք Լարսըն (Շուէտ), Յենրիանո Մորիէնթիս (Սպանիա) եւ Իլիան Մանսիպ (Թուրքիա) 3ական կոլ
 - 5.- Ռոնալտինիօ (Պրազիլ), Ռոնալտո Կոմէյ (Քոսթա Ռիքա), Մալքոլ Օուրն (Ալգիրիա), Ժուիշի Ինամորո (Ճափոն), Խարէտ Պորկեթի (Մեքսիքա), Նելսոն Քուէլա (Փարաիուէ), Հանրի Բամարա (Անգլիա), Յենրիանո Հիերո (Սպանիա), Սին Ժուիշ-Հուան (Հարաւային Բորնէյ), Լէստըն Տոնովան, Պրալին Մաքարայո (Մ. Ն.), Հասան Շաշ եւ Ուիլիք Տաւալա (Թուրքիա) 2ական կոլ
 - 6.- 78 մարզիկ՝ մէկական կոլ
- ՍՏՈՐԵՒ՝ Մոնտիալի պատմութեան լաւագոյն կոլսքորըրները.
- 1.- Կերտ Մուրըր (Արենտեան Գերմանիա, 1970 եւ 1974) 14 կոլ
 - 2.- Քիւսթ Ֆոնթեն (Յորանսա, 1958, 13 կոլ)
 - 3.- Փելէ (Պրազիլ, 1958էն 1970) եւ Ռոնալտո (Պրազիլ, 1988 եւ 2002) 12ական կոլ
 - 4.- Սանտոր Բոշիս (Հունգարիա, 1954) եւ Երիկըն Բիլնաման (Գերմանիա, 1990էն 1998) 11ական կոլ
 - 5.- Հելմուտ Ռահն (Արենտեան Գերմանիա, 1954 եւ 1958), Թեոֆիլո Քուպիլյա (Փերու, 1970 եւ 1978), Կրիկորը Լաթո (Լեհաստան, 1974 եւ 1982), Կերի Լինթըրը (Անգլիա, 1986 եւ 1990) եւ Կապրիել Պաթիստուրա (Արժանիոն, 1994էն 2002) 10ական կոլ

իր կատարած վերջին 14 մրցումներուն արձանագրեց 13 յաղթանակ, որոնց վեցը՝ 2002ի Մոնտիալին:

Վերադառնալով Պրազիլի յաղթանակը կերտած Ռոնալտոյի, ան առաջին հերթին

մին կրած պարտութիւնը Ֆրանսային (3-0):

Երեկուան աւարտական ճակատումին իրաւարարը՝ իտալացի Փիլիպպի Բոլիան, իր կարգին, եղաւ անոր ար-

Նշենք, թէ «Ֆեր-փիլի» այս տիտղոսին կրնան տիրանալ այն խումբերը միայն, որոնք կը հասնին նախ-տուրի հանգրուանին, այսինքն՝ Բ. հանգրուան:

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԱՐԱՐՔԸ ՍՊԱՆԻՅՅ ՄԵ՞Չ ԾՐԱԳՐՈՒԱԾ ԷՐ

Սպանական «Էլ Փալիս» թերթը երկ հաղորդած է, թե Մոհամեդ Աբթա, որ ենթադրաբար Սեպտեմբեր 11 խարձակումներուն «ուղեղ»ն է, անցեալ ամառ Սպանիոյ մէջ «վեհաժողով» մը կայացուցած է՝ այլ դաւադրանքներ հետ, անձնասպանական թռիչքները ծրագրելու համար:

Թերթին համաձայն, երկրորդ օրաչու մը, որ Առեւտուրի Համաշխարհային Կեդրոնի շէնքին վրայ ջախջախուած է՝ Մարտին Շեհիի, կրնայ նոյնպէս անցեալ Յուլիսին, ծովէկերեալ Թարակոնա քաղաքին մէջ կայացած ժողովին մասնակցած ըլլալ:

«Էլ Փալիս» ըսած է, որ իր պատմութիւնը հիմնուած է 700 էջոց գաղտնի տեղեկագրի մը վրայ, զոր սպանական իշխանութիւնները Է.Ֆ. Պի. Այ.ի յանձնած են:

ՈՒՄԵՐԱԿԹԸ «ԱՆԹՐԱՔՍ»Ի ԴԵՍ ՊԱՏՈՒԱՏՈՒՄՆԵՐՈՒՆ ԿԸ ՎԵՐԱԿՍԻ

Միւս կողմէ, Փենթակոն շարքավերջին յայտնած է, որ անթրաքսի դէմ պիտուրական եւ քաղաքային կարգ մը պաշտօնէականներու պատուաստումի աշխատանքին պիտի վերսկըսի, նկատի ունենալով, որ պատուաստը պատուաստող ամերիկեան միակ ընկերութիւնը կառավարութեան կողմէ կանաչ լոյս ստացած է:

Պաշտպանութեան նախարարութեան բարձրաստիճան մէկ պաշտօնատար յայտնած է, որ պիտեալ ուժերուն դէմ անթրաքսի գործածութեան սպառնալիքը «իսկական է» եւ թէ անթրաքսը չափազանց մահացու է ու դիրաւ պահ կը դրուի: «Գիտենք, որ հաւանական թշնամիներ պայն ունին», ըսած է ան:

Ամերիկեան ներկայ ծրագիրը կ'առաջադրէ պատուաստել պիտուրականներ եւ քաղաքայիններ, որոնք 15 օր եւ աւելի «աշխարհի մեծ սպառնալիքներ դիմադրող շրջաններ» կը դրկուին: Ան չէ նշած, թէ որո՞նք են այդ շրջանները:

Անթրաքսի դէմ օգտակար պատուաստի մը պահանջը աւելի էս կենսական դարձած էր անցեալ Հոկտեմբերին, երբ անթրաքս պարունակող նամակներ 5 Կոն իլլաձ Էին, իսկ 13 ուրիշներ ծանրօրէն վիրաւորուած էին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՅԳԱՆԻՍՏԱՆ

ԲՐԻՏԱՆԱՅԻՔ ԲԱՊՈՒԿԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՂԱԿԱՅԱՆԻՆ ՀԱԿԱԿՇԻՈՐ ՅԱՆՁՆԵՑԻՆ ԹՈՒՐԵՐՈՒՆ

ՔԱՊՈՒԼ, 30 (ՌՈՅԹԸՐԸ) — Բրիտանական օդուժը Կիրակի օր Աֆղանիստանի մայրաքաղաք Գապուլի գինուորական օդակայանին հակակշիռը Թուրքիոյ յանձնած է:

Բրիտանացի հրամանատար զննգապետ Կրէյհէմ Սթէյքի յայտնած է, որ հազարաւոր ականներ եւ չպայթած այլ սարքեր մաքրագործուած են օդակայանէն ներս եւ դուրս, սակայն զայն պաշարող ցանկապատէն անդին չուրջ 50 հազար չպայթած խորհրդային ականներ կան:

Բրիտանիա Աֆղանիստանի մէջ գտնուող միջազգային 4650 զինուոր հաշուող ուժերուն հրամանատարութիւնը Թուրքիոյ յանձնած էր Յունիս 20ին: Անիկա այդ պաշտօնը պիտի կատարէ 6 ամիս:

ԲԵԹՂԵՄԻ ՄԷՋ ԸԱՍՏԱՏՈՒԱԾ ԿՐԱԿՍԱՐԻ...

Շարունակուած Ա. Էջէն

ներու նախագահ Ճորճ Պուշի հետ, յառաջիկայացքի մէջ զննելու համար Միջին Արեւելքի խաղաղութիւնը: Արաֆատ այս յայտարարութեան թիւերը կը կատարէր, հակառակ անոր որ Պուշի կը պահանջէ իշխանութեանէն իր հեռացումը: Խօսելով Պուշի Միջին Արեւելքի խաղաղութեան մասին կատարած յայտարարութեան մասին, Արաֆատ զայն «կարեւոր» նկատեց, թէ էլ չնչեց, թէ ո՞ր կը ներկայանայ այդ կարեւորութիւնը: Արաֆատ ըսաւ նաեւ, որ Պուշի ամերիկացի առաջին նախագահն է, որ պաղեստինեան անկախ պետութիւն մը կ'առաջարկէ:



Պէն Էլիազար

Նախագահ ընտրուելէն եւ իշխանութիւնը ստանձնելէն (Յունուար 2001) ի վեր, Պուշի տակաւին հանդիպում չէ ունեցած Արաֆատի հետ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՎԵՅ ՆԱԽԱԶՆԵՐՈՒ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

ՇԻՄԻՍԱՅԻՆ ԵՒ ԸԱՐԱԲԱՅԻՆ ՔՈՐԵԱՆԵՐԸ ԶԻՐԱՐ Կ'ԱՍԲԱՍՏԱՆԵՆ

ՍԵՆՈՒԼ, 30 (ՌՈՅԹԸՐԸ) — Հիւսիսային Քորէա Կիրակի օր յայտարարեց, որ Հարաւային Քորէա անակրնկալ յարձակում մը կատարած է իր ծովուծին վրայ, հակադարձութիւն մը հրահրելու, Փիոնկեանկի դիմագիծը աղաւաղելու, ինչպէս նաեւ՝ սրելու երկու երկիրներուն միջեւ արդէն իսկ գոյութիւն ունեցող յարաւորութիւնը:

Փիոնկեանկի յայտարարութենէն քանի մը ժամ առաջ, Հարաւային Քորէայի նախագահ Քիմ Տայ ճունկ ըսած էր, թէ թափ պիտի տայ պաշտպանողական միջոցներու ու կարելիութիւններու ամբարձումը՝ կանխարգիւլելու համար Շարք օրուան գործողութեան նման արարքներ:

Սէնուի մէջ հրապարակուած տեղեկու-

թիւններու համաձայն՝ հիւսիսային քորէական ուժեր յարձակում գործած են հարաւային քորէական եզերագահ մէկ նաւակին դէմ, որ ընկղմած է եւ վեց նաւապետ սպանուած են: Փիոնկեանկի, սակայն, տարբեր ձեւով կը մեկնաբանէ: Ըստ Հիւսիսային Քորէայի՝ հարաւային ուժերը հրահրած են բախումը, որ տեղի ունեցած էր Շարք օր: Փիոնկեանկի համաձայն՝ Սէնու նախադարձակեցած է եւ կ'ուզէ ամբողջ պատասխանատուութիւնը բեռնել Հիւսիսային Քորէայի ուսերուն: Կանաչարուութեան բանբերին համաձայն, Հարաւային Քորէա անակրնկալ յարձակումի մը ձեռնարկած է՝ պատճառ դառնալով, որ Փիոնկեանկի եզերագահ ուժերը հակադարձէն: Միացեալ Նահանգ-

ներ դատապարտեցին Շարք օրուան միջադէպը՝ Հիւսիսային Քորէան ամբաստանելով բախումը հրահրելու եւ յարուածութիւնը սրելու յանցանքով:

Վերջերս, բաւական փորձեր կը կատարէին երկու Քորէաները հաշտեցնելու եւ անոնց միջեւ երկարամեայ թշնամութեան վերջ դնելու նպատակով: Միացեալ Նահանգներու եւ ընդհանրապէս Արեւմուտքին զօրակցութիւնը վայելող Հարաւային Քորէա եւ համայնապար վարչակարգ ունեցող Հիւսիսային Քորէա յաճախ կ'ամբաստանեն զիրար՝ կորիկային զէնքեր ունենալու յանցանքով: մէկ բան յստակ է սակայն, որ Փիոնկեանկի շատ հաւանաբար ունի կորիկային զէնքեր, ինչ որ խիստ կը մտահոգէ Արեւմուտքը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՓԱՌԲԸԼ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ՝ ԶԳՈՒՇ ԸԼԼԱԼՈՒ 4 ՅՈՒՆԻՍԻՆ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը երկ կոչ ուղղեց ամերիկացիներուն՝ գգուել ըլլալու հաւանական յարձակումներէ, յատկապէս 4 Յունիսին, Միացեալ Նահանգներու անկախութեան տօնին առիթով:

«Գաղտնի սպասարկութիւններէն մեզի տեղեկութիւններ կը հասնին հաւանական յարձակումներու մասին, որոնք կրնան հարուածել Միացեալ Նահանգները», կ'ըսէ Փաուլը ամերիկացիներուն ուղղուած իր խօսքին մէջ, որ ուղղակիօրէն սփռուեցաւ պատկերասփիւռի «Սի. Պի. Էս.» կայանէն:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԲԺՇԿԱԳԻՍԱԿԱՆ

**ՔԱՂՅԿԵՂԸ ԿԱՐԵԼԻ Է
ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼ
ԿԱՍ ԴԱՐՄԱՆԵԼ,
ՊԱՅՄԱՆԱԲ ՈՐ
ԱՐԱԳ ՆԿԱՏՈՒԻ**

Աշխարհի տարածքին քաղցկեղի տարեկան 10 միլիոն նոր պարագաներու մէկ երրորդը կարելի է կանխարգիլել եւ մէկ երրորդը կրնայ օգտակար կերպով դարձանել, եթէ հիւանդութիւնը կանխահասօրէն նկատուի, կ'ըսէ Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը այսօր լոյս տեսնող տեղեկագրի մը մէջ:

Օպոյի մէջ քաղցկեղի մասին կայանալիք միջազգային մէկ շաբթուան խորհրդածողովի մը առիթով պատրաստուած տեղեկագիրը կոչ կ'ուղղէ երկիրներուն, որ ապագային արշտաներու ձեռնարկէն՝ պայքարելու համար հիւանդութեան մը դէմ, որ տարեկան 6 միլիոն Կոն կը իւլէ:

Անկախ ճարտարարուեստականացած երկիրներուն մէջ մահուան երկրորդ մեծագոյն պատճառն է սրտանօթային հիւանդութիւններէ ետք:

Ըստ ՄԱԿի առողջապահական մարմինի՝ հաւանական է, որ մինչեւ 2020 տարեկան մահերու թիւը 10 միլիոնի բարձրանայ, նկատի ունենալով քաղցկեղի հակում ունեցող տարեցներու թիւին բարձրացումը եւ նախատեսութիւն մը, թէ ծխախոտի պատճառով թոքերու քաղցկեղի պարագաները աճ պիտի արձանագրեն:

Ներկայիս հաւանաբար շուրջ 20 միլիոն հոգի քաղցկեղէ կը տառապի աշխարհի տարածքին: Այս թիւը 30 միլիոնի պիտի բարձրանայ մինչեւ 2020, կ'ըսէ Ա. Հ. Կազմակերպութիւնը:

Անոր ընդհանուր տնօրէնը՝ Կրօ Հարլիմ Պրոնթիանթ շարքավերջին հաղորդագրութեան մը մէջ յայտնած է, որ ինչ ալ ըլլան երկրի մը վրայ նիւթական ճնշումները, լաւ մշակուած եւ գործարարուած ծրագիր մը կրնայ բարելաւել ապագային կացութիւնը եւ քաղցկեղէ տառապողներու կեանքերը:

Ծխախոտը քաղցկեղի կանխարգիլելի մեծագոյն պատճառն է, հետեւաբար անհրաժեշտ է քայլերու դիմել արգելակելու համար մարդոց ծխելու սկսիլը կամ համոզելու պանոնք, որ դադրին ծխելէ:

Ըստ կազմակերպութեան, բարգաւաճ աշխարհին մէջ ծխախոտի գործածութիւնը քաղցկեղի հետեւանքով բոլոր մահերուն շուրջ 30 առ հարիւր կը պատճառէ, իսկ բարգաւաճման ընթացքի մէջ գտնուող երկիրներուն մէջ համեմատութիւնը բարձրանալու ընթացքի մէջ է, յատկապէս՝ կիներու պարագային:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՔԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՇԱՐԺՈՒՄ ՄԸ ՀԱՄԱԶԱՅՆ՝ ՄԱՏՏԱՄ ՀԻՒՄԷՅՆԻ ՏԱՊԱԼՈՒՄԻՆ, ԲԱՅՅ...

Իրաքեան ընդդիմադիր գլխաւոր շարժում մը յայտարարեց, որ Ուաշինգթոն պետք է գտնէ միջոցը նախագահ Սատամ Հիւսէյնը տապալելու ՄԱԿի որդշումներուն հիման վրայ, ոչ թէ՛ գինուորական գործողութեամբ մը:

մտահոգի կը թուի, որովհետեւ իրաքցի անմեղ ժողովուրդը անգամ մը եւս թիրախ պիտի դառնայ: Ան աւելցուց, որ Միացեալ Նահանգներէն կը պահանջուի օժանդակել իրաքցի ժողովուրդին եւ խաղաղ միջոցներով ձեռքբազատիլ Սատ-

տամի իշխանութենէն: Նախապէս Հաքիմ եւ ընդդիմադիր այլ դեմակարգեր կ'ողջունեն անբիկեան հաւանական գործողութիւն մը, որուն թիրախը պիտի ըլլայ Սատամի տապալումը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՇԱԿՆԵՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԶԻ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ Ի ՏԵՍ՝ ՊՈՒՇ ԿԸ ՓՈՐՁԷ ՀԱՐՑԸ ՄԵՂՄԱՑՆԵԼ

Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի Շարք օր կոչ ուղղած է օրէնքներ հաստատելու՝ «ամերիկեան գործարարութեան ուղղամտութեան հանդէպ հաւատքը վերահաստատելու համար»՝ ամերիկեան տնտեսութիւնը ցնցած կարգ մը գայթակղութիւններէ ետք:

Պուշի ձայնասփռուած շարքական իր խօսքին մէջ յայտնած է, որ հանրութեան վստահութեան որեւէ բնաբարում պիտի չհանդուրժուի: Դեմոկրատներ իրենց ձայնը միացուցած են նախագահին, անյապաղ քայլեր պահանջելով՝ «վստահութեան տագնապին» վերջ տալու համար:

Պուշի վայրուք արտայայտած էր անցեալ շաբաթ, երբ անթել հաղորդակցութեանց հսկայ «Ուրրլոթըմ» ընկերութիւնը յայտարարած էր, թէ 3,8 միլիարդ տոյար հաշուակալական վեղծարարութիւն արձանագրուած է իր հաշիւներուն մէջ, իսկ «Չիրոքս» ընկերութիւնը իր հաշիւներուն մէջ եկամուտի 2 միլիարդ տոյարի բաց մը բացայայտած էր:

(ՌՈՅԹԸՐԸ)

National

THE PEAK OF JAPANESE TECHNOLOGY

Solar Refreshing Filter

This long-lasting solar refreshing charcoal filter absorbs tobacco smoke and other contaminants that can cause room odors.

Catechin Filter

Catechin plant is well known for its medicinal effects against: Cancer, virus, allergy, cholera, flu, and dust particles.

For more info, call: Tutunjian Corp. S.A. (04) 712129/130 - 711967, (03) 243203 Fax: (04) 712177 E-mail: TTC@cyberia.net.lb